հրամանաւն 1820 թուին գաղթել եկել են դարձեալ Շամախի քաղաքը։

Այժմ 1890 թուին եւս կան Ֆիթում ծնուած քանի ծերունի մարդիկ, զոր օրինակ՝ Տէր Սահակն, թերդի Յակոբն, բաշմաղչի Մարգարան, Բալաքովխանց Նիկողոսն, են։

Ժողովրդական աւանդութիւն, շաբաթաթերթ «Արձագանք» 1888 Հմ. 35. Ալ. Զաքարեանց։

«ՇԻՐՎԱՆԻ ԿՈՅՍԸ ԵՒ ՖԻԹ-ԴԱՂԸ

« . . . Այդպէս մի օր զառամեալ թագաւորի քաջ զօրապետները աւետեցին նրան նրա քաջ զօրքերի փառաւոր յաղթութիւնը, Շիրվանի քաղաքների և գիւղերի աւերակ դառնալը, և իբրեւ յաղթութեան փառք ընծայ բերին նրան Շիրվանի չքնաղ գեղեցկուհուն, նազելի աննման թագուհուն։

« . . . Հեռու հիւսիսում, որպէս յաւիտենական պահապան այն նեղ շաւիղի, որ տանում է դէպի Կովկասեան վիթխարի ձիւնապատ սարերը, հարթ, տափարակ լեռան վրայ բարձրանում է Ֆիթ դաղը։

Բարձր է Ֆիթ-դաղը և մինչեւ այսօր ոչ ոք չէ համարձակուել չափել նրա բարձրութիւնը։ Յաւիտենական ձիւնով է պատած նորա ամպերի մէջ անյայտացող կատարը։ Գեղեցիկ է Ֆիթ-դաղը, երբ իւր ձիւնապատ գագաթով ամենից առաջ ժպտում է առաւօտեան արշալոյսին. աւելի գեղեցիկ է նա, երբ արեգակի վերջին ճառագայթները երեկոյեան պահուն ոսկեզօծելով նրա կատարը, խաղում են նրա մշտնջենական ձիւնի կոյտերի հետ։ Ամբողջ աշխարհը թաղուած է մթութեան մէջ, և միայն Ֆիթ-դաղի գագաթն է վառվում այդ ժամանակ շողշողուն լուսով։ Արեւը սիրում է նրան, առաւօտեան առաջին ողջոյնը նրան է տալիս և ամենից յետոյ է նրանից անջատւում։ Մութ խորխորատներով, կատաղի առուակներով է պատած Ֆիթ-դաղը և նրա շուրջը միայն սրաթռիչ արծիւներն են շրջան կազմում։ Նրա կրծքին կպած է այն կախարդական ամրոցը, որը Իրանի մեծ Շահին Շա-